



**ԵՄ-ՀՀ «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ» 366-ՐԴ ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿԱԶՄԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. 2017թ. նոյեմբերի 24-ին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև ստորագրված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի» (այսուհետ՝ ՀԸԳՀ) 366-րդ հոդվածով նախատեսվում է ձևավորել Քաղաքացիական հասարակության պլատֆորմ (այսուհետ՝ ՔՀՊ)՝ կազմված Եվրոպական միության քաղաքացիական, այդ թվում՝ Եվրոպական տնտեսական և սոցիալական կոմիտեի ներկայացուցիչներից և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, այդ թվում՝ Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի ներկայացուցիչներից:
2. Սույն կարգով սահմանվում են ՔՀՊ-ի կազմում ընդգրկվելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների ներկայացուցիչների ընտրությունն իրականացնող ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ Ընտրական հանձնաժողով) գործառույթները, ինչպես նաև այդ հանձնաժողովի գործունեության կազմակերպման, ՔՀՊ-ի անդամների թեկնածուների առաջադրման և ընտրության (այսուհետ՝ ընտրություններ) անցկացման ընթացակարգերը:
3. Ընտրական հանձնաժողովը կազմված է հինգ անդամից, որոնցից երեքին նշանակում է Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը, մեկին՝ Գործընկերություն հանուն բաց հասարակության նախաձեռնությունը և մեկին՝ Հայաստանի ՔՀԿ-ների Կառուցողական երկխոսության ցանցը՝ իրենց ներքին ընթացակարգերին համապատասխան: Հանձնաժողովն իր կազմից ձայների պարզ մեծամասնությամբ ընտրում է նախագահ:
4. Ընտրական հանձնաժողովի անդամը չի կարող լինել թեկնածու և ընտրող այս գործընթացներում: Նրա ներկայացրած կազմակերպությունն իրավունք ունի որպես թեկնածու և որպես ընտրող պատվիրակել այլ անձի:
5. Ընտրական հանձնաժողովի անդամը պարտավոր է հայտարարագիր ներկայացնել իրեն ընտրող և պատվիրակող միավորմանն այն մասին, որ ինքը նախընթաց առնվազն 6 ամիսների ընթացքում չի եղել պետական իշխանության մարմնի աշխատակից՝ աշխատանքային պայմանագրով կամ չի մատուցել վճարովի ծառայություններ պետական իշխանության մարմնի և Ընտրական հանձնաժողովի կազմում չի դառնալու պետական իշխանության մարմնի աշխատակից կամ վճարովի ծառայություն մատուցելու վերջինիս:

6. Ընտրական հանձնաժողովի կազմում չեն կարող լինել միմյանց նկատմամբ առաջին կարգի ազգականներ (հայր, մայր, զավակ, ամուսին, եղբայր, քույր): Այդպիսի հանգամանք ի հայտ գալու դեպքում Քարտուղարությունը դիմում է պատվիրակող միավորմանը կամ միավորումներին՝ ներկայացնելով իրավիճակը և առաջարկելով փոխարինել պատվիրակին:
7. ՀԸԳՀ ՔՀՊ-ի հայաստանյան հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների թեկնածուների (այսուհետ՝ թեկնածուներ) ընտրության արդյունքներով ընտրական հանձնաժողովը կազմում և հրապարակում է ութ անձից բաղկացած ցուցակ, որոնք ներկայացնում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող հասարակական կազմակերպություններ և հիմնադրամներ:
8. Ընտրական հանձնաժողովի գործունեությանը իրավակազմակերպական օժանդակություն է ցուցաբերում Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարությունը (այսուհետ՝ Քարտուղարություն):

2. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Ընտրական հանձնաժողովի գործունեությունը հիմնված է թեկնածուների ընտրության արդարության, պայմանների հավասարության, ընթացակարգի թափանցիկության և հրապարակայնության սկզբունքների վրա:
10. Ընտրական հանձնաժողովը.
 - 1) կազմակերպում և անցկացնում է թեկնածուների ընտրությունը,
 - 2) սահմանում է քվեարկության արդյունքների և ընտրությունների արդյունքների արձանագրության նմուշները,
 - 3) իրականացնում է նախնական ստուգում՝ պարզելու, թե արդյոք հայտ ներկայացրած թեկնածուները համապատասխանում են սահմանված չափանիշներին,
 - 4) լուծում է ընտրության գործընթացի հետ կապված այլ հարցեր,
 - 5) կազմում և հրապարակում է հաղթող ճանաչված հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների ութ ներկայացուցիչների, այդ թվում՝ չորս փոխարինող անդամների ցուցակը,
 - 6) լուծում է Ընտրական հանձնաժողովի գործունեությանն առնչվող և սույն կարգով չկարգավորված այլ հարցեր:
11. Ընտրական հանձնաժողովի նիստն իրավագոր է հանձնաժողովի անդամների կեսից ավելիի մասնակցության դեպքում:
12. Ընտրական հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
13. Ընտրական հանձնաժողովի նիստերը ձայնագրվում կամ տեսաձայնագրվում են: Ընտրական հանձնաժողովի նիստի վերաբերյալ կազմվում է թղթային արձանագրություն: Ընտրություններին կարող են ներկա գտնվել զանգվածային լրատվության միջոցների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ՝ ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

3. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

14. Սույն կարգի ընդունումից և ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ-ի կայքում դրա հրապարակումից հետո ձևավորվում է Ընտրական հանձնաժողովը, որը ձևավորումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում, քարտուղարության միջոցով ընտրություններ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ-ի պաշտոնական կայքով և ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ-ի ֆեյսբուքյան էջով, առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող մամուլում և դրա առցանց տարբերակում, ինչպես նաև, ըստ հնարավորության, զանգվածային լրատվության այլ միջոցներով:
15. Հայտարարությունը պետք է պարունակի առնվազն հետևյալ տվյալները՝
- ա. ՀՀ և ԵՄ «Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով» նախատեսված քաղաքացիական հասարակության պլատֆորմի թեկնածուներին ներկայացվող պահանջները,
 - բ. ընտրություններին որպես թեկնածու մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
 - գ. ընտրությունների անցկացման պայմանները, այդ թվում՝ թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը, առավելագույն միավորի բաշխումը՝ ըստ գնահատման ենթակա առանձին պահանջների, գնահատման և միավորների հաշվարկման կարգը,
 - դ. փաստաթղթերի ներկայացման ժամկետները և վայրը, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն:
16. Թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը 20-ն է:
17. Թեկնածուներին ներկայացվող պահանջներն են՝
- Հայաստանի եվրոպական ինտեգրման բնագավառում և/կամ ՀՀԳՀ-ով սահմանված ոլորտներից որևէ մեկում առնվազն 3 տարի ակտիվ գործունեության իրականացում, որոնց արդյունքներով կազմվել է (են) զեկույց(ներ), այդ թվում՝ հետազոտություններ, վերլուծություններ, հայեցակարգեր և այլն (առավելագույնը 5 միավոր),
 - կազմակերպության կարողությունները, այդ թվում՝ աշխատակազմ, ֆինանսավորում, գրասենյակային տարածք, կայք և այլն (առավելագույնը 3 միավոր),
 - հանրային հեղինակությունը, արդյունավետ, կառուցողական լայն ու բազմակողմ համագործակցություն իրականացնելու կարողությունը (3 միավոր),
 - ՀՀԳՀ-ի իրականացման գործում պետական կառավարման մարմիններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու տեսլականը (առավելագույնը 3 միավոր),
 - ՀՀԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման տեսլականը (3 միավոր),
 - անզլերենի իմացությունը. որպես անզլերենի բավարար մակարդակի իմացության ապացույց՝ դիմողը ներկայացնում է բարձրագույն կրթության պրոցեսն անզլերենով անցնելու մասին փաստաթուղթ: Հակառակ դեպքում դիմողն անցնում է Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված որակավորված մասնագետի

կողմից անգլերենի ստուգում (առավելագույնը 3 միավոր): Հանձնաժողովը կարող է սահմանել նվազագույն չափանիշներ:

18. Ընտրվելու իրավունք ունեն չՀԳՀ-ով սահմանված ոլորտներից որևէ մեկում վերջին 3 տարիների ընթացքում գործունեություն ծավալած և այդ ծրագրային թեմաներով զեկույցներ հրապարակած, գործատուների միավորում կամ արհմիություն չհանդիսացող հասարակական կազմակերպությունները կամ հիմնադրամները, որոնց անդամների, այդ թվում՝ ղեկավար մարմինների անդամների առնվազն 75 տոկոսն ընգրկված չէ պետական կառավարման մարմիններում:
19. Ընտրություններին մասնակցելու հավակնություն ունեցող կազմակերպության ներկայացուցիչը (այսուհետ՝ Հավակնորդ) հայտարարությանը հաջորդող 15 օրվա ընթացքում Քարտուղարության միջոցով Ընտրական հանձնաժողովին է ներկայացնում ընտրություններին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր), ինչպես նաև իր հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտ կոնտակտային տվյալները:
20. Հավակնորդի ներկայացվելիք փաստաթղթերը պետք է ներառեն՝
 - առաջադրող հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի պետական գրանցման վկայականը, կանոնադրությունը, կազմակերպության ոլորտային գործունեության մասին տեղեկություններ (Organisation profile),
 - հավակնորդի կենսագրական տվյալները,
 - առաջադրող հասարակական կազմակերպության կամ հիմնադրամի ղեկավար մարմինների կազմերը, նշելով թե անդամներից որոնք են աշխատում պետական կառավարման մարմնում, եթե կան այդպիսիք,
 - 2017-2020թթ. ընթացքում չՀԳՀ-ով սահմանված ոլորտներից որևէ մեկում ծրագր(եր)ի իրականացման վերաբերյալ տեղեկանք (ՀԿ-ից կամ հիմնադրամից) և դրա(նց) արդյունքներով կազմված զեկույց(ներ)ը թղթային կամ էլեկտրոնային տարբերակով կամ դրանց էլեկտրոնային հղումները,
 - Հայաստանի եվրոպական ինտեգրման գործում առնվազն 3 տարի գործունեության իրականացման մասին վկայող տեղեկանք (ՀԿ-ից կամ հիմնադրամից),
 - չՀԳՀ-ի իրականացման գործում պետական կառավարման մարմիններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու տեսլականը՝ շարադրված մինչև մեկ A4 էջ ծավալով,
 - չՀԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման տեսլականը՝ շարադրված մինչև մեկ A4 էջի ծավալով,
 - Կազմակերպական կարողությունները հավաստող տեղեկանք (ՀԿ-ից կամ հիմնադրամից),
 - Վերջին 3 տարիների ընթացքում 10 և ավելի կազմակերպությունների հետ արդյունավետ և կառուցողական համագործակցություն իրականացնելու մասին տեղեկանք (ՀԿ-ից կամ հիմնադրամից),
 - հայտարարագիր այն մասին, որ հավակնորդը նախընթաց առնվազն 6 ամիսների ընթացքում չի եղել պետական իշխանության մարմնի աշխատակից՝ մշտական աշխատանքի պայմանագրով կամ վճարովի ծառայություններ չի մատուցել պետական իշխանության մարմնին, ինչպես նաև՝ ընտրվելու դեպքում ՔՀՊ կազմում չի դառնալու պետական իշխանության մարմնի աշխատակից կամ վճարովի ծառայություն չի մատուցելու պետական իշխանության մարմնին:

21. Փաստաթղթերը կարող են ներկայացվել առձեռն կամ էլեկտրոնային փոստի միջոցով:
22. Փաստաթղթերը համարվում են ժամկետում ներկայացված, եթե Քարտուղարությունում դրանք ստացվել են մինչև սույն կարգի 19-րդ կետում նշված ժամկետի լրանալը:
23. Ուղարկված փաստաթղթերի ստացման վերաբերյալ հավակնորդը ծանուցվում է փաստաթղթերն ստանալուն հաջորդող երեք օրվա ընթացքում՝ իր կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեով:
24. Փաստաթղթերն ընդունելիս Քարտուղարությունը պարզում է դրանց լրիվությունը՝ ըստ համապատասխան ցանկի:
25. Ներկայացված փաստաթղթերը թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում հավակնորդն այդ մասին Քարտուղարության կողմից ծանուցվում է էլ. փոստի միջոցով երեք օրվա ընթացքում:
26. Փաստաթղթերի թերությունները հավակնորդի կողմից կարող են վերացվել երեք օրվա ընթացքում:
27. Քարտուղարությունը, ուսումնասիրելով հավակնորդների ներկայացրած փաստաթղթերը, սույն կարգի 19-րդ կամ 26-րդ կետերում նշված ժամկետները լրանալու օրվան հաջորդող երեք օրվա ընթացքում կազմում և Հանձնաժողովին է ներկայացնում հավակնորդների ցուցակը և նրանց ներկայացրած փաստաթղթերը՝ նշելով թերությունները և դրանք վերացնելու կապակցությամբ սույն կարգի 24-րդ և 25-րդ կետերի համաձայն ձեռնարկված միջոցառումները և դրանց արդյունքները:
28. Ընտրություններն անցկացվում են երկու փուլով, որոնցից առաջինը փաստաթղթերի լրիվության և համապատասխանության ստուգման (այսուհետ՝ փաստաթղթային ստուգման) փուլն է, իսկ երկրորդը՝ քվեարկության, որը կարող է լինել նաև առցանց: Առցանց քվեարկությունն անցկացվում է Ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:
29. Ընտրությունների փաստաթղթային ստուգման փուլում Հանձնաժողովը ստուգում է փաստաթղթերի լրիվությունը, դրանց համապատասխանությունն անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին, իսկ ողջամիտ կասկածի դեպքում՝ նաև փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը: Հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի կամ տեղեկությունների հավաստիությունը Հանձնաժողովի որոշմամբ պարզվում է Քարտուղարության միջոցով: Հանձնաժողովի տեղեկացմամբ հավակնորդը կարող է մասնակցել փաստաթղթային ստուգման փուլին:
30. Հաշվի առնելով սույն կարգի 26-րդ կետի համաձայն ձեռնարկված միջոցառումների արդյունքները՝ Հանձնաժողովը կազմում է քվեարկության փուլ անցած կազմակերպությունների ներկայացուցիչների (այսուհետ՝ Թեկնածուներ) ցուցակը, որի մասին թեկնածուները ծանուցվում են ցուցակը կազմելուն հաջորդող երեք օրվա ընթացքում՝ իրենց կողմից ներկայացված էլեկտրոնային փոստի հասցեներով:
31. Քվեարկության փուլում քվեարկելու իրավունք ունեն ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ-ին անդամակցող, բայց գործատուների միություն կամ արհմիություն չհանդիսացող այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնց անունից, ըստ իրենց կանոնադրության, հանդես գալու իրավունք ունեցող մարմինները այդ նպատակով ի պատասխան Քարտուղարության նամակին եռօրյա ժամկետում գրավոր հաստատում են քվեարկությանը մասնակցելու իրենց մտադրությունը՝ ներկայացնելով սույն կարգին կից Հավելված 1-ի հայտարարագիրը՝ իրենց տվյալներով և ստորագրությամբ:

Լիազորված քվեարկությունը թույլատրվում է կազմակերպության կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգով լիազորագրի ներկայացման պարագայում:

32. ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ անդամ չհանդիսացող այն հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները, որոնք գործում են մեկ տարուց ավելի, կարողացել են ապահովել նշանակալի արդյունքներ, և որոնց անդամները երբևէ չեն արատավորվել կոռուպցիոն կամ իշխանության կողմից հովանավորչության դրսևորումների հետ առնչակցությամբ, գրավոր դիմում ներկայացնելու պարագայում ընտրելու իրավունք ստանում են Հանձնաժողովի որոշմամբ:
33. Քարտուղարությունը եռօրյա ժամկետում ամփոփում և Ընտրական հանձնաժողովին է ներկայացնում քվեարկությանն իրենց մասնակցելու հաստատումը տված ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ-ին անդամակցող կազմակերպությունների և ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ անդամ չհանդիսացող կազմակերպությունների գրավոր դիմումները:
34. Ընտրական հանձնաժողովը 29-րդ կետով նախատեսված փաստաթղթերն ստանալուց հետո 15 օրվա ընթացքում հրապարակում է քվեարկության ժամանակ քվեարկելու իրավունք ունեցող կազմակերպությունների և քվեարկության փուլ անցած կազմակերպությունների ներկայացուցիչների ցուցակը, ինչպես նաև քվեարկության անցկացման օրը, ժամը և վայրը ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ-ի և Ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող կազմակերպությունների պաշտոնական կայքերի առավել տեսանելի հատվածում:
35. Քվեարկության փուլում քվեարկելու իրավունք ունեցող կազմակերպությունների ներկայացուցիչները սույն կարգով հաստատված չափանիշներին և ընթացակարգին համապատասխան գնահատում են քվեարկության փուլ անցած կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ ըստ 17-րդ կետի պահանջների, այնուհետև գնահատման բոլոր արդյունքներով կազմակերպվում է քվեարկություն, որի միջոցով հաստատվում են միավորները՝ 17-րդ կետում սահմանված պահանջներին համապատասխան:
36. Քվեարկության արդյունքներով ամենաբարձր հանրագումարային միավորներ ստացած 8 կազմակերպությունների ներկայացուցիչներից առավելագույն միավորներ ստացած 4-ն ընդգրկվում են ՀԸԳՀ-ի քաղաքացիական հասարակության պլատֆորմում (հիմնական անդամներ), մյուս 4-ը համարվում են փոխարինող անդամներ: Ինչպես հիմնական, այնպես էլ՝ փոխարինող անդամների կազմերի հարցում պետք է ապահովված լինի սեռերի ներկայացվածության սկզբունքը: Ինչպես հիմնական, այնպես էլ փոխարինող անդամների կազմերում պետք է ապահովվի առնվազն մեկ մյուս սեռի ներկայացվածությունը: Այդ նպատակով հիմնական կազմում միայն նույն սեռի անդամների ներկայացվածության դեպքում այդ կազմից նվազագույն քվե ստացած անդամին Ընտրական հանձնաժողովը փոխարինում է հաջորդող առավելագույն քվե ստացած մյուս սեռի թեկնածուով: Այդ փոխատեղման դեպքում, հիմնական կազմից հեռացված անդամը անցնում է փոխարինող կազմ: Փոխարինող կազմում սեռերի ներկայացվածության ապահովումն իրականացվում է հիմնական կազմի համար նախատեսված ընթացակարգով: Փոխարինող կազմից հեռացված անդամի թափուր տեղը ընտրական հանձնաժողովը համալրում է թեկնածուներից առավել քվե ստացած հաջորդ մյուս սեռի ներկայացուցչով:

37. Սեռերի ներկայացվածության սկզբունքից բացառություն թույլատրվում է, եթե Հանձնաժողովը ծանրակշիռ փաստարկներով կամ բացառիկ հանգամանքների մատնանշմամբ հիմնավորում է դրա պահպանման անհնարինությունը:
38. Քվեարկության արդյունքներով հավասար միավորներ ստացած կազմակերպությունների ներկայացուցիչներից որևէ մեկին կամ մի քանիսին ՀՀԳՀ ՔՀՊ-ի հայաստանյան հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների թեկնածուների ցուցակում ընդգրկելու նպատակով Հանձնաժողովն անցկացնում է քվեարկություն, բացառությամբ այն դեպքերի, երբ քվեարկության հնարավոր արդյունքները կարող են խախտել սեռերի ներկայացվածության սկզբունքը: Այս դեպքում, հանձնաժողովի նիստին ներկա յուրաքանչյուր անդամ բաց քվեարկությամբ «կողմ» է քվեարկում ընտրված մասնակիցներից համապատասխանաբար որևէ մեկի կամ մի քանիսի թեկնածությանը: Չայների հավասարության դեպքում անցկացվում է լրացուցիչ քվեարկություն՝ սույն կետում նշված կարգով: Քվեարկության արդյունքներով առավելագույն «կողմ» ձայներ ստացած ընտրվող մասնակիցներից համապատասխանաբար մեկը կամ մի քանիսն ընդգրկվում են ցուցակում:
39. Այս կարգով ՔՀՊ անդամ ընտրվողների և փոխարինող անդամների կազմում չեն կարող լինել միմյանց նկատմամբ առաջին կարգի ազգականներ (հայր, մայր, զավակ, ամուսին, եղբայր, քույր): Նման հանգամանքի առկայության դեպքում ազգակցական կապի մեջ գտնվողներից նախապատվությունը տրվում է առավելագույն քվե ստացողին:
40. Քվեարկության արդյունքների, այդ թվում՝ Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրությունների արդյունքների ամփոփման վերաբերյալ կազմվում են արձանագրություններ:
41. Ընտրական հանձնաժողովը ցուցակը կազմելուն հաջորդող երեք օրվա ընթացքում ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ-ի և իր անդամ հանդիսացող կազմակերպությունների պաշտոնական կայքերում հրապարակում է ընտրված հիմնական և փոխարինող անդամների ցուցակը՝ սույն կարգով նախատեսված ընթացակարգերի պահպանմամբ:
42. ՀՀԳՀ-ի Քաղաքացիական հասարակության պլատֆորմի հիմնական անդամների պարտականությունների իրականացման անհնարինության դեպքում նրանք փոխարինվում են փոխարինող անդամներով՝ ըստ առավելագույն միավորների հաջորդականության և սեռային բաշխվածության սկզբունքների պահպանման:
43. ՀՀԳՀ-ի Քաղաքացիական հասարակության պլատֆորմի անդամներն, այդ թվում՝ փոխարինող ընտրվում են երկու տարի ժամկետով:

4. ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

44. Ընտրական հանձնաժողովը ընտրությունը հայտարարում է չկայացած, և հայտարարվում է նոր ընտրություն, եթե՝
- հավակնորդների թիվը ութից պակաս է,
 - ընտրվողների թիվը ութից պակաս է,
 - քվեարկությանը ներկայացած մասնակիցների թիվը ութից պակաս է,
 - չի ապահովվել սեռերի ներկայացվածության սկզբունքը, կամ այն չապահովելու վերաբերյալ բացակայում է ծանրակշիռ պատճառաբանությունը,
 - ի հայտ են եկել այնպիսի խախտումներ կամ թերություններ, որոնք կարող էին ազդել քվեարկության և/կամ ընտրությունների ամփոփման արդյունքների վրա,

- առկա են թեկնածուների ընտրությունն իրականացնելու անհնարինության այլ դեպքեր,
 - լրացել է ՀՀԳՀ-ի Քաղհասարակության պլատֆորմի անդամների, այդ թվում՝ փոխարինող անդամների պաշտոնավարման երկամյա ժամկետը:
45. ՀՀԳՀ-ի Քաղաքացիական հասարակության պլատֆորմի բոլոր հիմնական անդամների պարտականությունների իրականացման անհնարինության դեպքում նրանց փոխարինող անդամներով փոխարինելու դեպքում (եթե այլևս չկան փոխարինող անդամներ), իրականացվում է փոխարինող 4 անդամների նոր ընտրություն:
46. Հանձնաժողովը նոր ընտրություն անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է սույն կարգի 43-րդ կետում նշված որևէ հիմքի մասին պատշաճ տեղեկանալու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում:
47. Նոր ընտրությունն անցկացվում է սույն կարգով հաստատված ընթացակարգերով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

շահերի բախման բացառման, մարդու իրավունքների հարգման և ակտիվ մասնակցության վերաբերյալ

Ստորագրելով սույն հայտարարությունը, ես,-ու երաշխավորում եմ, որ չեմ օգտագործի իմ դիրքը որպես Հայաստան-Եվրամիություն Քաղաքացիական հասարակության պլատֆորմի անդամ՝ իմ կազմակերպության կամ իմ առաջին կարգի ազգականների նյութական շահերը սպասարկելու նպատակով:

Ես նաև հավաստում եմ, որ հարգում եմ մարդու իրավունքները և ազատությունները՝ առանց խտրականության ըստ ազգային, ռասայական, կրոնական, սեռային պատկանելության կամ սեռական ինքնության, քաղաքական կամ այլ համոզմունքների, սոցիալական ծագման, ունեցվածքային դիրքի, ծննդավայրի կամ այլ հատկանիշների:

Ես երաշխավորում եմ, որ ներգրավված կլինեմ Պլատֆորմի աշխատանքներին անհրաժեշտ ակտիվությամբ, առանց հարգելի պատճառների չեմ բացակայի դրա նիստերից, դրա կազմակերպած մյուս միջոցառումներից և հանդիպումներից, կապահովեմ իմ աշխատանքների առավելագույն թափանցիկությունն ամբողջ հասարակության համար:

Ստորագրող՝ Ստորագրություն

ԵՐԱՇԽԱՎՈՐԱԳԻՐ

կազմակերպության ռեսուրսների ներդրման, քաղաքական աֆիլիացման բացառման և մարդու իրավունքների հարգման վերաբերյալ

..... կազմակերպությունը, որի անդամ է Հայաստան-Եվրամիություն քաղաքացիական հասարակության պլատֆորմում ներգրավվող-ը երաշխավորում է, որ կներդնի անհրաժեշտ ռեսուրսներ և կարողություններ նրա լիարժեք և անխափան գործունեությունը իրականացնելու համար:

Կազմակերպությունը երաշխավորում է, որ իր անդամների, այդ թվում՝ ղեկավար մարմինների անդամների կեսը և ավելին ընգրկված չեն պետական կառավարման մարմիններում:

Կազմակերպությունը նաև հավաստում է, որ հարգում է մարդու իրավունքները և ազատությունները՝ առանց խտրականության ըստ ազգային, ռասայական, կրոնական, սեռային պատկանելության կամ սեռական ինքնության, քաղաքական կամ այլ համոզմունքների, սոցիալական ծագման, ունեցվածքային դիրքի, ծննդավայրի կամ այլ հատկանիշների:

Նախագահ՝ Ստորագրություն